



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԴԱՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒՄ

ԵՐՐՈՐԴ ՏՍՐԻ

ԹԻԻ 92

26 ԱՊՐԻԼ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ԵՍ ԵՄ
ՔԵՆՏՐՈՆ
ՏԻՒՐՈՆ
ԿԵՆՏՐՈՆ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Երրորդ տարի Թ 26 Ապրիլ 1913 Թիւ 92

«Մրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առձագանգ շաբաթաբերքը շա-
ռունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մրբազան Հայրն առաջին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կաթող. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ՆՄՄԱԻՈՒՄԻ ՈՌՂՆԻՈՐԸ

Ա.

Իսրայէլի Քաղաքը չէր թօթափած դեռ
իր անօրէն արբեցութիւնը. իր մարդարէա-
սպան հայրերուն չարութեան մրուրը քամած՝
և գոհ էր... Փարիսական Սրահին մէջ հայ-
հոյած, Դատաւորի ապարանքին մէջ ոռնա-
ցած, մահապարտներու լերան վրայ դիւա-
ղէմ ծիծաղած էր... դրուժան սերունդը:

Ալեականերու մէջ սուղելու փութացող ե-
րեկոյեան արփենին՝ մեղքակաթ երկրին ըլ-
րակներուն ստուերները կ'երկարէր զարնա-
նարոյր հովիտներու վրայ, ուր հնչած էին

Տեսանողներու ահաւոր վայնասունը կամ
տատրակային մրմունջը: Թեթեւ շափմանդաղ
մը ոսկի կը տեղար ծաղկաղարդ մարգերուն
վրայ: Հեռուէն՝ սրբազան Գետոյն դարիւ
դարիւ գլուռղ ալիքներուն հեծութեան խառ-
նուած, սիւզ մը կը շնչէր անձկակարօտ,
մշտական հառա՛չը, մնչելով մէ' կ'Անուն միայն,
դարերու Յանկալին:

Սոխակ մը կ'երգէր, Սոխակ մը երկնա-
գեղզեղ:

Երկու ճամբորդներ՝ արիւնաբոյր Քաղա-
քէն ելան մտազբաղ, տխուր և ընկճած. և
լուռ ու մունջ քալեցին երկար. անտէք շատ
լացած էին: Քալեցին միայնակ, զանազա
քայլերով, օձապտոյտ երկարող պողոտային
վրայէն:

Յանկարծ հեծեց երիցազոյնը, և նոր ար-
ցունքներ գլորեցան իր տոգունած այտերէն.
և ուղղեց կորացած քամակը՝ դարերու ճըն-

չումը կարծես թօթուել ուղելով: Խզեց տրտմաթախիժ լուսթիւնը, և աջը կարկառելով դէպ ի Երուսաղէմ, «Անօրէն քաղաք, հառաչեց, մեր միակ յոյսին նշոյլն ալ մարեց, սպաննեց Արդարը, ամբարիշտ քաղաք»:

Եւ սկսան երկու ճամբորդները խօսիլ ու վիճել, և խառնել իրենց կարեւոր սրտերուն ցաւի թափակները: Եւ միայնակ քայեցին աւրանտին վրայէն, երբ արեւը կը հակէր դէպի իր մարը և մեղամաղձիկ կու լար Սոխակը:

Յանկարծ տեսան մէկը ու սարսեցան, ճամբորդ մը կայնեցաւ յանկարծ անոնց քով՝ երկուքին մէջտեղը, ինչպէս կը փայլի ասուպ մը յանկարծ:

Գեղեցկատեսիլ երիտասարդ մըն էր. թարթիչներէն կը ցօղէր մարդարիտներ. երկնագեղ բիւրեղէն սէր կը կաթկթէր: Թեթեւ թըրթռուն լօգիկին մէջ՝ նազելի հասակ, սիրուն շարժումներ, քաղցրիկ ժպիտներ, համակ սրտապրաւ:

Ողջունեց, և սկսաւ քալել անոնց հետ՝ Եմմաուուսի նոր Ուղեւորը:

Անհուն անապատին մէջ նուազած խուփք մը ինչպէս կ'երջանկանայ Ուլասիսի մը քով, այսպէս վերակենդանացան երկու ճամբորդները: Նոր ոյժ ստացան. սրտերնին ուժգին բարախեց: Մայրամուտ արեւու շողերէն զօրաւոր խուրձ մը փայլատակեց Ուղեւորին հրաշալի դէմքը. տեսան ու զմայլեցան. չըփեցին աչքերնին, կրկին նայեցան, ճիգեր ըրին ճանչնալու... Օտարական պանդուխտ մըն էր:

Ու խօսեցաւ Եմմաուուսի Ուղեւորը. — «Ընկերներ, տրտում կը տեսնեմ զձեզ, եւ կու լան ձեր ձայները, մինչդեռ կը քալէք ու կը խօսիք. ո՞ր անգութ ձեռքեր խոցեցին ձեր սիրտերը»:

Երկու ճամբորդներուն կրտսերագոյնը, որ խորխտ ու պերճ, կարծես կը պահանջէր որ ամէն ոք իր Յանկալի'ն միայն գիտնար ու խօսէր, — «Զարմանալի՛ բան, դուչեց, անգիտանալու չէիր թէ ինչո՞ւ տրտում ենք. տրտում ենք ցմահ, Ամբողջ Երուսաղէմ՝ զղրդեցաւ և դժու ես միայն որ չլսեցիր թէ ի՞նչ ահաւոր բան գործուեցաւ անոր մէջ այս վերջին օրերս»:

— «Ի՞նչ բան, հարցուց անխոռով գեղադէմ երիտասարդը, Եմմաուուսի Ուղեւորը:

Ու սկսան պատմել մարդկութեան Ողբերգութիւնը, անհնարին Ոճիրը. թէ ի՞նչպէս անիրաւ Հրեան ջախջախեց Յեսսեայ ծաղիկը. մարեց Յակոբայ փառփուն աստղը, սպաննեց Արդարը, որ հզօր էր լաւութեամբ ու խօսքով, Աստուծոյ ու մարդկան հաճելի, որ մարդարէ էր և սքանչելագործ. Որդի կ'անուանուէր Բարձրելոյ Հօր Աստուծոյ՝ Օրհնելոյն. որ անցաւ՝ միայն բարիքներ գործելով, հրաշքներ ու շնորհներ սփռելով: Բնութիւնն համայն իր հրամաններուն հլու ծառայեց. մորիկներն ու գերեզման սարսեցան իրմէն. կոյրեր լոյս տեսան, կաղեր քալեցին և աւետարանեց թշուառներուն անվկանդ մեծ յոյս»:

Գեղադէմ երիտասարդը ասորժով կը լսէր և դեռ կ'ուզէր լսել:

Ու պատմեցին թէ կուսածին էր այդ Յանկալին, ու Խոստացուածն էր Ան: Եւ ամբողջին Յովհաննէս՝ փեսայ կոչեց զԱնի երկնաւոր, և իւր անձը անարժան դատեց խոնարհելու լուծելու Անոր կօշիկներուն կապերը: Չէր եղած երբեք մէկ մը Անոր նման, հեղ խոնարհ սրտով, քաւիչ և մխիթարիչ: Տեղ չունէր Նա իր գլուխը հանգչեցնելու եւ նըժդեհ էր ամենազուրկ, մինչդեռ բնութիւնը զողահար ստրուկ էր Իրեն: Դիտութիւնը Ինքն էր՝ անձնաւորեալ: Ծաշակեցին Անոր քաղցրութենէն՝ Բանամացի կիներ, Նայինի աշիւներ, Մագդաղենացիներ, մաքսաւորներ ու մեղաւորներ, Անառակ որդիք և Զաքքէոսներ և դեռ հազարներ բիւրեր: Ներել սորվեցուց թշնամիներու. անթիւ անգամներ ներել սորվեցուց. սիրել ատեցողները ու ազօթել հալածչաց համար: Անոր նման արդարութեան արեւ մը դեռ չփթեցաւ մարդկութեան արեւելքին վրայ: Նա՝ Իմաստութիւն յայտնուեցաւ լուսափայլ: Մովսէս եւ մարդարէք եւ ազգաց իմաստունք փոշի են այդ սրբաւուն առջեւ: Անով՝ պահ մը երկնքի փոխուեցաւ այս ցաւոց աշխարհը և սրբուած էին մեր յորդ արտասուքները: Նա՛ էր Մեհիա եւ Թագաւոր Իսրայէլի, զոր քարոզեց

աւետարներ Զուարթունը Անոր Կուսամօր, զանի գուշակեց Մոգերու հրաշալի Աստղը. և դեռ ողը կը թնդացնէն արձագանքներն Ուվաննաներու, որոնցմով փառարանեց զինքը՝ Բաղաքը։ Ամէնքը կը սպասէին որ Ան պիտի փրկէ զԻսրայէլ։

Դեղադէմ երիտասարդին դէմքը ցոլաց։ Հարցուց թէ ի՞նչպէս սպաննեցին այդ աղ-գաց Յանկալին։

Ու պատմեցին Վերնատան եղերերը, թէ ի՞նչպէս այդ աղգաց Յանկալին նախադուշակեց իր մահը, եւ լուաց իր աշակերտներուն ոտուքները, ու միտքարեց իր սիրելիները այնպիսի խօսքերով որ դեռ մարդու բերնէն չեն ելած։ Պատմեցին Գեթսեմանիի տագնապնդը, ուժգին ողբերն ու արտասուքը և արեան քրտինքը. ապա խաւարային մատուցիւնը, կալանաւորումը, հարց ու փորձը, դատապարտութիւնը. և ապա տակները եւ կոտորները եւ թուքերը եւ ճաղկանքը եւ փշեայ պսակը, եւ Պիլատոսին աշխարհասէր երկիւղը եւ մարմնասէր Հերովդէսի խեղկատակութիւնը եւ արիւնազանգ Գողգոթան եւ խաչը եւ աւազակները եւ ծանականքը եւ ցաւազին մայրը եւ ծաւալը եւ յետին տիեզերասարսուռ հառաչը և գլխուն կրօնքն ու հոգւոյն աւանդումը»։

Գեղադէմ երիտասարդին այսերը կարմրեցան վարդերու պէս, ու լոյս փայլատակեց իր բիրբրէն. եւ նոան ծաղիկ շրթները դող ի դող՝ հարցուց անխռով. «Վերջը»։

— «Վերջը... թաղուեցաւ, եւ իրեն հետ գրեթէ մեր յոյսն ալ։ Ու կու լանք լռելեայն, երեք օրէ ի վեր։ Սակայն մերթնեմքն քանի մը բարեպաշտ կիներ այս առաւօտ իսկ գացին արտասուելու Անոր Գերեզմանին վրայ ու խնկելու Անոր կուսական մարմինը։ Վերադարձան շտապաւ եւ ըսին թէ թափուր է օրհնեալ Գերեզմանը. թէ հրեշտակներու տեսիլքներ ալ տեսան, երկնաւոր ձայներ լսեցին որ կը քարոզէին թէ Նա կենդանի է... Իսկոյն վաղեցին իր սիրելիներէն ոմանք և սառեցեցին կիներուն ըսածը որ ճիշդ էր. բայց զինքը չտեսան... Խոտված է մեր հոգին, ալէտաւան իսպառ»։

— «Ո՛վ մտքով ու սրտով շուարած մարդիկ՝ հողմահար եղէգի մէջ հաւատքով տան, աղաղակեց Գեղադէմ երիտասարդը իշխանական շէշտերով։ Ամբարտաւանութիւնն է ձեր թերահաւատութեան պատճառը, որ անմիտ չերեւալու համար աւելի անմիտ կ'ընէ։ Եւ կը վիճէք, որովհետեւ յախուռն կը թերահաւատիք։ Չէք հաւատար ո՛չ կանանց, ո՛չ հրեշտակի, ո՛չ ձեր ընկերաց. չէք հաւատար ո՛չ մարդու հանճարին, ո՛չ Քրիստոսի կանխասացութիւններուն, ո՛չ Աստուծոյ յայտնութեան։ Չէք հաւատար ու տրտում էք, եւ գրեթէ յուսահատ։ Ի գո՛ւր ուրեմն խօսեցան մարգարէները, Մեսիայի, աղգաց Յանկալիին վրայօք. չքննեցի՞ք Գիրքը. Գիրքը գլխէ գլուխ զԱնի կը քարոզէ, մերթ յայտնի մերթ ընդ քօղով, մերթ այլաբանութեամբ ու մերթ առակօք։ Անոր ծնունդէն մինչեւ մահը, ամենափոքր մանրամասնութիւններ դրոշմուած արձանացած են Գիրքին մէջ, Աստուծոյ հողով շնչուած, անխալ վկայութեամբ։ Պէ՛տք էր ուրեմն որ նա չարչարուէր եւ ապա մահէր իր փառքը, թագաւորելու յաւիտեանս։ Եթէ մնար Նա դերեզմանի աւար եւ ապականութեան զոհ, ուրեմն մարդկութիւնը և տիեզերք պիտի չունենային նշանակութիւն. զի Մեսիան միայն է անոնց կեդրոն գոյութեան, Նա միայն փրկիչ ու փառաւորող։ Առանց Անոր յիմարութիւն է իմաստնոց գիտութիւնը եւ հիւլէ են հզօր բռնաւորք։ Նա միայն է զօր՝ մարդուն և Աստուծոյ միջեւ։ Ոչինչ է ուրեմն ամէն բան, եւ անմեկնելի՝ մարդուս հանճարը, ոչքը, երանութեան փափաքը, եթէ Աստուծոյ Քրիստոսը չյարեաւ. պէտք է հաւատաք անոր յարութեանը. ամէն գիտութեան, ամէն գոյութեան, ամէն երջանկութեան կենդրոնն է Օծելոյն Յարութիւնը. էական եւ հիմն է ամենայնի՝ Յարութեան այս անստան հաւատքը»։

Երկու ճամբորդները ցնցուեցան այս կորովի շէշտերէն, ինչպէս անակնկալ մորկէ. զգացին ծածկուած Մեծվայելչութիւն մը, անհունօրէն հաղորդակցական, ինչպէս Բարութիւնն էականապէս։ Ան ատեն Յոյսը

խլրտեցաւ իրենց թողմած արտերուն մէջ : Աղերսարկու ակնարկներ ուղղեցին այդ նորանշան Ուղեւորին . հայցեցին պաղատագին որ խօսի :

Եւ նա խօսեցաւ հզօրեղապէս , աստուածաբուլիս Իմաստութեան խօսքեր խօսեցաւ . յաւիտենականութեան դանձարանէն ելած գոհար մարդարիտ խօսքեր հեղեղեց : Մեկնեց անոնց՝ Մովսէսէն սկսելով , ամէն մարդարէն երբ ու Գիրքերը , ամէն ինչ որ գրուած էր ծանկալիին վրայ : Շնորհքներ կը սփռուէին Անոր բերնէն . այդ մարդը կարծես գերագոյն էակ մըն էր . քաղցր էր Անոր բարբառը , ու Անոր տեսիլը գեղեցիկ : Ապշեցան , վրդովեցան , յակճիռս հիացան . ճմլեցաւ արտերնին ու փղճկեցաւ :

Ոսկեփայլ ահագին դունդն արեւուն՝ Գեղադէմ երիտասարդին հուսկ ողջոյն մը տուած ու մեկնած էր արդէն , կարծես Անոր դէմքին անիմանալի փայլերէն ամօթապարտ , խուսափուկ , արտալածիկ :

Քալեցին , դեռ քալեցին , եւ նա խօսեցաւ , միշտ խօսեցաւ :

Ու կ'երգէր Սոխակը :

Վերջալոյսի շողերով ողողուած՝ երեւան եկաւ Եմմաւուս , միացող ծխնեւոյճներով . փոքրիկ ուղի մը կը բաժնուէր մեծ պողոտայէն :

(Շարունակելի)

ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒԱԿԱՆ

(Շար. եւ վերջ)

Իշպու Յոբելեանը գազանապիլմէք իչուն պիլնմէսի լազըմ կէլէն վէ Առաքելական Կոնգակոտ միւնտէրիճ օլան թալիմաթլարը պիլդ տէ պուրայա տէրճ իտէրիդ : Արբազան Բաբա հազրէթլէրինին էմրի իւզրէ , պու Յոբելեան լիակատար ներողութիւնը քաւարան ճանլարը իչուն տախի գազանըլապիլիր :

1. Յոբելեանըն միւսսէքի սեվամը :

Իշպու Յոբելեան , Կոնգակըմըլըն իլանը կիւնիւնտէն իթիպարէն պաշլաեարապ , Ազիլ

Պիքիրին Անարատ Յղութիւնը կիւնիւ տէ տախիլ օլտուղը հալտէ Դեկտեմբեր 9 ա գատար տէվամ իտէճէքտիր :

2. Յոբելեանն ներողութիւնընը գազանապիլմէք իչուն լազըմ օլան շարիար :

1. Թախին օլունան քիլիսալարա գիյարէթ :

2. Ֆուգարայա սատապա :

3. Խոստովանանք վէ Ս . Հաղորդութիւն խորհուրդլարընա հազլաշմագ :

Ձիյարէթ իչուն Բայիթախթտա թախին օլունան քիլիսալար շու աթիտէքիլէր տիրէր . Ա . Բանկալթիտէ Միւթարեանլարըն Անարատ Յղութիւն քիլիսէսի , Բ . Աթոռանիտ Ս . Արտուածածին քիլիսէսի , վէ Գ . Ա . միւնասուրը երրորդութիւն քիլիսէսի : Պալատէ մէզքիւր քիլիսէլէրէ իքիլէր քէրրէ գիյարէթ օլունաճագ տրը : Եալընըզ պիր քիլիսէսի հախօտ մասուռը օլան քէօլէրտէ , ախի քիլիսէ վէ եա մատուռա ալթը քէրրէ գիյարէթ իտիլմէլի տիր :

Փագաթ ումումա աչըզ օլան քիլիսէ վէ եա մատուռ մէվճուս օլմայան եէրլէրտէ , տինտարան քէնտիլէրէ պիր սուհուլէթ օլմագ իւզրէ , մէզքիւր ալթը գիյարէթլէրի պաշգապիր եէրտէ , քէնտիլէրին ինթիխապ իտէճէլի պիր Գաթօլիզ քիլիսասընտա վէ եա մատուռընտա իճրա իտէպիլիլէր :

3. Հեր գիյարէք իչուն շար օլան ճուա :

Տինտարան հէր պիր գիյարէթ էմասընտա պիր միւտտէթ Ս . Բաբա հազրէթլէրի նիլէթինէ եանի , Ա . Դաթօլիզ Բիլիսասընըն վէ Բիւրսիլի Շէրիֆին միւլէֆֆագիլէթ վէ թէալիսի , Բ . Հերետիկոսըլըլարըն զայիլ օլմասը , Գ . Եանըլմըլ օլանլարըն դարձա կէլմէսի , Դ . Բրիլթիան հիւթիւմտարլարըն վէ Բրէնսլէրին իթթիֆագը , Է . պիլ ճիւլէ տինտարլարըն պիր օլմասը վէ բահաթլըլ վէ սայիլէ իչուն տուա իթմէլիտիրլէր :

4. Շար օլան սասագա :

Պու նագաթի սատագայը հէր քէս քէնտի իգթիտալընա կէօրէ հարմալըտըր . մամաֆիյի՛ս սատագայը իսթէրսէ ֆուգարալարա վէրմէյէ վէ հախօտ միւլէսսէսաթը խայրիէտէն պիրինէ վէրմէյէ մուլթար տըր :

5. Շարք օլան Ս. Խորհուրդլար .

Յորեւեան Ներողութիւնը գազանմագ ի-
չուն թաւին օլունան միւստէթ զարֆընտա ,
տինտարան ճիտտի պիր բիւշմանլըզլա Ապաշ-
խարութիւն վէ Ս . Հաղորդութիւն Խոր-
հուրդլարնա եագլաշմաղա պօրճլու տըրլար :
6. Պալասէ մեգփիւր շարքլարը ինրա իսեմի-
յեմլէր իչուն Ս. Բաբա հազրէթլէրինին միւ-
սաասեյիւրի .

Ս . Բաբա , խասթէլիք , մահպուսլըզ սէ-
պէպիլլէ վէ եախօտ հէր հանկի աղըր մանիա
տօլալըսըլա , պալատէ մէզքիւր շարթլարը ,
եախօտ ծնլարտան պիր գաչընը ինրա իտէ-
մէյէնլէրին տախի պու Յորեւեանը գազանա-
պիլմէսինէ միւսաատէ իթմիշտիր : Պինաէն
ալէյ , պու կիպիլէր հազընտա մէզքիւր
շարթլարը տահա միւնասիպլէրինէ թէպտիլ
եախօտ Ներողութիւն գազանաճագ վազթը
եագլըն պիր վազթա թալիզ իտէպիլմէլէրի ի-
չուն խոստովանահայրլարա լազըմ օլան մէ-
զունիյէթի վէրիյօր : Քէզալիք իլք հաղոր-
դութիւն ալմայա գապիլիյէթլէրի օլմայան
չօճուզլար իչուն տա հաղորդութիւն ալմագ
շարթընը գալտըրմաղա միւսաատէ էյլէյօր :
7 . Յորեւեան միւնասեպիթիլի խոստովանա-
հայրլարա վերիլին Ֆեմլգ էլ ասէ մեզունիյիթիւր :

1 . Բաբա հազրէթլէրի , պիլա թէֆրիզ
պիլ ճիւմլէ տինտարանըն , Յորեւեան Ներո-
ղութիւնը գազանմագ իչուն իզթիզա իտէն
խոստովանանքը , իսթէտիքլէրի քահանայա
օլմայա հիւրբիյէթ վէրիեօր . էլ վէրիւր քի
պու ինթիխապ օլունան քահանանըն , խոս-
տովանանք իշիթմէյէ իզնի օլուն : Մայրա-
պետլէր վէ օնլարըն Նորընծալարը տախի ,
Մայրապետ խոստովանանքը իշիթմէյէ մէ-
զուն օլան հէր հանկի պիր քահանայը իս-
թէրլէրսէ , ինթիխապ էթմէյէ մէզուն տըր-
լար : Շէօյլէ քի , հէր քէսին քինտիսի իչուն
ինթիխապ իթտիլի խոստովանահայր , ետլը-
նըզ օ տէֆայա մախսու օլմաք իւզրէ (եանի
Յորեւեան Ներողութիւնը գազանմագ իչուն
շարթ օլան խոստովանանքը օլտուղը գէման)
վէ եալընըզ խոստովանանք տիլանընտա ին-
րա իտիլմէք շարթըլա , քէնտի խոստովա-
նորդիսինի հէր տիւրլիւ բանաղրանքտան ,

կախակայութիւնտան , վէ Գիլիսա գանուն-
լարը նամընա վէ եախօտ պիր Առաջնորդ թա-
րաֆընտան գօնուլմուշ օլուպ տա , հէր հանկի
պիր սէպէպէ մէպնի օլուրսա օլսուն , եա վի-
ճակաւորլարա , եա Ս . Բաբայա վէ եախօտ
Գիւրսիլի Շէրիֆէ , սուրէթը մախսուսէտէ
պիլէ վերապահեալ օլուպ , էն վասի սալահի-
յէթլէրի հալի պուլունան մէզունիյէթլէր տա-
խիլինտէ տախի օլմայան քիլիսա ճէզալարըն
տան վէ հէր նէվ կիւնահլարտան՝ լազըմ կէլէն
վէ միւնասիպ օլան ապաշխարանքը գօհարագ
արձակել իթմէյէ մէզունտըր : Հերետիկոսլըզ-
տան տէօնէնլէրէ կէլինճէ , պունլար Գիլիսա
գանունլարը հիւքմիւնճէ , քէնտի եանլընըզ-
լարընը ընտտ վէ օնլարտան վազ կէլտիք-
տէն սօնրա արձակում ալապիլիլէր :

2 . Ինթիխապ օլունան պու խոստովա-
նահայր ուխտլարը վէ եէմիլէրի , հաթթա
Ս . Բաբայա վերապահեալ օլանլարը պիլէ ,
սայիր խայր ամէլլէրէ թէպտիլ իտէպիլմէճէք-
տիր : Անճագ քի 1 . բաքլըզ վէ կրօնաւոր-
լըք ուխտլարը . 2 . պիր շախսը սալիսէ
գարչը պիր վազիֆէ թէզամմուն իտէն ուխտ-
լարը . 3 . (էյէր խոստովանահայր թարաֆըն-
տան վազը օլան թէպտիլ տէ կիւնահտան
սագընմաղա միւնասիթ տէյիլսէ) կիւնահտան
սագընմագ իւզրէ գօնուլմուշ օլան ապաշխա-
րութիւն ուխտլարը պու մէզունիյէթլէ տա-
խիլ տէյիլ տիրլէր :

3 . Պու խոստովանահայր՝ գաթէն Ս . Աս-
տիճանլարը ալմըշ օլան ապաշխարողլարըն
ալտըղը Ս . Աստիճանլարըն իսթիմալընա վէ
եախօտ տահա եիւքսէք աստիճանլար գա-
պուլընա մանի օլան հէր տիւրլիւ կիզլի ան-
կանոնութիւնլարը գալտըրմաղա մէզուն օլա-
ճագտըր :

8 . Խոստովանահայրլարա վերիլին մեզունի-
յիթիլին քահիսի .

1 . Ս . Բաբա հազրէթլէրի Յորեւեան Կոն-
զակընտա չունը տա պէյան իտէր քի , կիզլի
եախօտ աշիքեար վէ եա քէսպի ալէնիյէթ
իթմիշ օլան պիր գապահաթ , պիր գուսուր վէ
եա հէրնէ սուրէթլէ օլուրսա օլսուն , մարուզ
գալընմըշ պիր ասէմի գապիլիյէթ սէպէպիլլէ
հուսուլա կէլմիշ պուլունան անկանոնութիւն-

լարը դաւարարագ զաթէն դապոււլ օլունմուշ օլան Ս. Աստիճանլարը իսթիմալ իտէպիլմէք եախօտ տահա եիւքսէք աստիճանլար դապուլինէ գապիլիյէթ վէրէպիլմէք խուսուսընտա խոստովանահայրլարա վէլէվ խոստովանանք տիվանընտա պիլէ, սալահիյէթ վէրիլմէմիշ տիր:

2. Բէզալիք ճէմիլ իւլ զիքը օն տէօրտիւնճիւ Բենեդիկտոսըն Ապաշխարուքիւն խորհուրդը իպարէլէրիյէ պաշլայան դարարը տախի լաղվ օլունմուշ տէյիլ տիր:

3. Ս. Բաբա հաղրէթլէրի վէ եա Բիւրսիլի Շէրիֆ թարաֆընտան, եախօտ պիր Նկեղեցական Առաջնորդ վէ եա Հաքիմ թարաֆընտան ասլը ատընճա բանադրեալ, կախակայեալ, արգիլեալ վէ եախօտ պալատէ մէզքիւր Բիլիսա ճէզալարընտան պիրիյէ մահքիւմ իլան իտիլմիշ օլանլար Յորեկեան միւստէթի զարֆընտա թէվպէ իթմիշ վէ մէրճիինտէն արձակոււմ ալմըշ օլմազլարսա, պունլար հազգընտա իշպու Առաքելական Կոնգակըն հիւքմիւ հօգարը:

Յագաթ էյէր պու կիպիլէրին, լաղըմ կէլէնի Յորեկեան միւստէթի զարֆընտա եաբամայաճազլարընա խոստովանահայրլարընճա գանաաթ հասըլ օլուրսա, Ս. Բաբա հաղրէթլէրի, սըրֆ Յորեկեան ներդուլթիւնը դազանապիլմէլէրի իշուն, իւք ֆըրսաթտա լաղըմ կէլէնի եաբմազ շարթըլա, խոստովանանք տիվանընտա արձակոււմ ալապիլմէլէրինէ միւսաատէ էյլէմիշտիր:

Իշլէ; ֆազլիլթլու վարդապետլէր, Յորեկեան միւնասիպէթիյէ կիւնահարընտան թէմիզլէնմէք մագոստըլա միւրաճաաթ իտէճէք օլանլար հազգընտա խոստովանահայրլարճա բիշի նազարընտա թուլթուլմասը իճապ իտէն Առաքելական թալիմաթլար պունլար տըր:

Պունտան մատա, Ս. Բաբա հաղրէթլէրինին էմրի միւնէպինճէ, Յորեկեան գէմանընտա հայաթ քէլամընը տայիմա վաղ իտէրէք, եանըլըդտա օլանլարըն թէվպէյէ կէլմէլէրինէ, էյիլէրին շէհրահը սատազաթտա տահա գիյատէ թագվիյէթ պուլմալարընա, նիհայէթ, Ս. Բաբանըն իհան էյլէմիշ օլար-

ղը պու պատիի նէճաթ վասիթատան հէր քէսին իսթիֆատէյէ տալէթ վէ թէշվիք օլունմաարնա տիզգաթ էյլէմէլէրինի սուրէթը մախսուսէտէ իւհտէլէրինէ ճէմաաթ թէսլիմ օլունմուշ օլան Բահանալարա թէնապիհ վէ թալիսիյէ իտէրիզ:

Յիսուս Բրիւտոտա սէվկիլի էվլատարըմը, իշպու Յորեկեան պիզէ հալընըզ ճէննէթ իշուն պէօյիւք սէվապլար գազանաճազ գէման օլմայուպ, Բիլիսանըն իթթիհատընա, տիստարանըն եէկտիկէրլէրիյէ իթթիհատընա, վէ սազալարըն, Բրիստոսըն վէքիլի օլան քէնտի պաշլարըլա իթթիհատընա եէնի պիր լապըթա օլաճապտըր: Իշլէ պու իթթիհատ, պու պիրլիք, պու Յորեկեան կիւնէլէրինտէ, էվլէլ էմիրտէ տուա վէ իպատէթ իլէ վէ պատէհու Բիւրսիլի Շէրիֆէ սօղրու իթաաթը միւթէվազիանէմիզ իլէ եէնի պիր գուլվէթ տահա պուլաճազ տըր:

Աճէպա գէմանը հաղըրըն միւշքիլաթընա մարուզ գալմըշ օլան մուհարիպ Բիլիսա, կիւնիւմիւզտէն զիյատէ նէ վազըթ արզը ինթիյաճ իթմիշտիր: Պու կիւնքինտէն սահա շէտիտ ճէհէննէմի մէհաճէմաթա նէ վազըթ մարուզ գալմըշտըր: Պու կիւն միւլթէլիֆ գէլալթլէր օնուն թալիմաթը հազիգիյէսինի հէտմ իթմէլէ, հէվայի նէֆսանիյէ, օնուն գուտսիյէթինի, օնուն թէմիզ բարոյականընը լէքէտար էյլէմէյէ, իտարի հազսըզ գանունլար, օնուն հիւրրիյէթինին սէլպինէ, մօտէրնիզմ, քէնտի կիզլի գէհրլէրիյէ օնուն տէյիշիլմէզ օլան էսասլարընը զայիֆլէթմէյէ, հէր շէյի ավամա թապի իթմէք բուհը մէքբուհը, օնուն սընֆը բուհպանը էսիր իթմէյէ աճէպա նէ կիպի եէնի եէնի զայրէթլէր սարֆ իթմէյօրլար: Հէր խուսուստա եէկտիկէրլէրիյէ հալը նիֆապտա պուլունան Բիլիսա տիւշմէնլէրի, նասիյէսի իւզէրինտէ քէնտի միւէսսիսի իլահիսինին «Ճէհէննէմ գարուլարը օնա զալէպէ իտէմէյէճէքլէր» հօլունտաքի նազզ օլունմազ վատընը համիլ օլարագ, հէր տիւրլիւ ֆուրթուրալար արապընտան ֆիւթիւրըզ կէշէն, տալիմա գայիմ օլան վէ տիւնեանըն նիհայէթինէ գատար տա պապի գալաճազ օլան Բրիստոսըն ազիզ Բիլիսաը-

նա գաթի պիր հիւճիւմտէ պուլունարագ անը
խարապ էթմէք ֆիքրինտէ զանն խտէրսինքի
ադտը մուգավէլէ էյլէմիշ, իթթիֆագ իթ-
միշտիրլէր:

Պու միւտհիշ տիւշմէնէր գարշըսընտա
տինտարան պիր սիւհա մալիքտիրլէր քի,
հէր նէ գատար տա տիւնեա նազարընտա
զաթի վէ էհէմիյէթսիզ իսէ տէ, ճէնապը
Հազգըն ինտինտէ բէք գուվէթլի վէ բէք է-
հէմիյէթլի տիր, պու սիւհա քէնաիլէրին
տուաւը վէ Գիլիսանըն Բէիսի էքրէմինէ օլան
զալըր գապիլի թէզէլզիւլ իրթիպաթլարը
տըր: Պինաէն ալէյհ, բուհպան վէ ճէմաաթ
ճիւմէմիզ տէ իսթիրհամ վէ թէզարրու. ա-
վազէի թէհասսիւրլէրիմիզի միւթէալ հազ-
րէթլէրինին թախթընա գատար բէֆ իտէլիմ,
վէ ալի զէմանտա տա քեաֆֆէմիզին էպը
մուազէզի, Գիլիսանըն Բէիսի ումումիսի օ-
լան Ս. Բաբա հազրէթլէրինէ հազըն կիտէ-
րէք, մէհապպէթ իլէ, ֆէսիս օլունմազ պիր
մէրպուլթիյէթ իլէ օնը գուշատալըմ, օնա լա-
հիւթէզէլզիւլ պիր սատագաթ վատ էյլէյէ-
լիմ վէ օնունլա պէրապէր տուա իտէլիմ քի,
խէլասքեարը խալըխանըմը Յիսուս Գրիստոս
Վալիտէսի լէքէսիզ Պիքիրին չէֆաաթըլլա
նիհայէթ պիզէ մէրհամէթ էյլէսին, շու իզ-
թիրապ կիւնլէրինի գրաաթսըն վէ շու տիւն-
եատէ պիզէ մէսրուրիյէթ սէլամէթ վէ տարը
ախրէթտէ տախի սաատէթի էպէտիյէ իհսան
պուլուրսուն:

Տեքստաթէ, Պէյօղլու Կաթողիկոսարա-
նըմըգսան, Բաքրիգլիյիիզին իւ-
չիւննիւ սեքեսիսէ 1913 Ապրիլ
6 su բահրի օլունմըք սըր:

(Իմգա) ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

Պատրիարք Յանն Կիլիկիոյ

Գէորգ Ե. Վ. Թէրզիպէսեան
Կաթողիկոսական Դիւանապէս

ԺԶ. ՀԱՐԻԻՐԱՄԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ

(Շար. եւ վերջ)

Այս հրովարտակով կայսրութիւնը իրօք և
ամբողջապէս ճանչցաւ քրիստոնէական կրօնքը:
Այն օրէն Եկեղեցին կրցաւ զրաւել աշխարհի
մէջ իրեն պատշաճ տեղը: Գրիստոնէութիւնը
այլ ևս ազատ՝ իր առոյգ տիոց յորդազեղ
եռանդը՝ գետնադաւաճաններու մութ նկուղ-
ներուն խորքը արգելափակ պահելէ, տարա-
ծուեցաւ արագ արագ, քանի մը դարէն՝ տի-
րեց բոլոր աշխարհի:

Կոստանդիանոս, կ'ըսէ Եւսեբիոս իր կեն-
սագիրն ու բարեկամը, համոզուած ըլլալով
որ իր յաղթութիւններուն բուն պատ-
ճառը Աստուած է յաւէտ քան իր սեփական
իմաստութիւնը, բացարձակապէս Աստուծոյ
կը վերագրէր անոնց փառքը. և երբ, քիչ
մը վերջը իրեն արձան մը կանգնուեցաւ,
ուղեց որ անոր ձեռքը տրուի երկայն ծաշ մը
սա արձանագրութեամբ թէ՛ ինք այս օգոս-
տափառ նշանով ազատեց Հռոմը բռնաւորի
մը լուծէն և վերահաստատեց անոր վազէմի
ազատութիւնը:

Կոստանդիանոսի աշխարհակալութեան
փափաքը գոհացնելու համար չէր որ Եր-
կինք զօրավիզն և օգնական եղան անոր:
Աստուածային նախախնամութիւնը զա-
նիկայ ամէն հակառակորդներու յաղթական
հանդիսացնելով, և պարզեւելով անոր խա-
ղաղաւէտ և երկարատեւ թագաւորութիւն
մը՝ անոր կատարել կու տար այնքան մեծ
գործ մը, որ իրօք, երբ նկատի առնուի իր
բովանդակ փուլերով, յիմարութիւն համար-
ուելու է, ինչպէս որ մարդկային իմաստու-
թեան՝ յիմարութիւն երեւցած էր, Յիսուսի
գործը, երբ՝ առաքելոց միջոցաւ ձեռք զար-
կաւ աշխարհը դարձի բերելու:

Աշխարհի ամէնէն հզօր իշխանները, ի-
րենց նիւթական ամբողջ ուժը թափեալ էին
քրիստոնէութիւնը արեան հեղեղի ու տան-
ջանքներու մէջ ջնջելու. բայց անյաջողու-
թեան մատնուելով ամէն աղքերու առջեւ ա-

պացուցած էին թէ աստուածային ծագումունի
այն կրօնքը որ այնքան գերմարդկային ուժ
կրնայ հաղորդել միլիոնաւոր տկար արարած-
ներու : Միւս կողմանէ Աստուծոյ նախա-
խնամութիւնը չէր կրնար բռն հալածումի և
դիւցազնութիւն պահանջող վիճակի մը մէջ
թողուլ Եկեղեցին որ սահմանուած էր իր մէջ
առնելու ո՛չ միայն ճշմարտութեան և սիրոյ
ծարաւով տոգորուած կորովի հոգիներ՝ այլ
նաեւ ամէն մարդիկ աւանց ազգի , ժողովուրդի
խտրութեան : Ուստի Եկեղեցին բիրտ ու
բռնական ուժի դէմ իր անընկճելի ընդդի-
մութիւնը ցոյց տալէն վերջը , պէտք էր որ
հալածումի չըջանին յաջորդէր խաղաղու-
թեան և հանգստութեան շրջան մը , որպէսզի
ժողովրդեան ոչ-քրիստոնեայ զանգուածն ալ
նոր կրօնքը ընդգրկելու միջոց ունենար : Ահա՛
այս գործը կատարելու կոչուած էր Կոստան-
դիանոս : Ինք պետական օրինաց յօրինուա-
ծութիւնը Յիսուսի վարդապետութեան հա-
մեմատ կազմակերպելով՝ մարդկային ընկերու-
թիւնը հեթանոսութենէ քրիստոնէութեան
պիտի փոխարկէր : Այսքան մեծ գործի մը հե-
ռապատկերը միայն , բաւական էր , մարդկօ-
րէն խօսելով , ամենաբարձր հանճարի մը ան-
գամ ահ եւ զարհուրանք ազդելու : Կոստան-
դիանոս ի գլուխ հանեց զայն կարծես տղու
մը միամտութեամբ , մինչեւ իր կենաց վերջը
սպասեց անոր յաջողութեան : որովհետեւ ինք
վստահ էր Աստուծոյ իրեն յանձնած ձեռ-
նարկին բարի ելքին վրայ : Ու եւ է մէկը կը-
րօնավորութեան ստիպելու համար բռնու-
թիւն բանեցնելէ զգուշանալով հանդերձ , ետ
չկեցաւ գործածելէ անուղղակի միջոցներ ,
զորոնք ամէն վեհապետ օրինաւորապէս կրնայ
տրամադրել՝ ժողովուրդը հեթանոսութենէ
տակաւ հեռացնելու և Քրիստոսի կրօնքը անոր
ընդգրկել տալու համար :

Քրիստոնէութեան ծաւալման նպատակու
համար գործածած մէկ միջոցն ալ եղաւ՝ ճշ-
մարիտ Աստուծոյ տաճարներ կառուցանել եւ
անոնց հասոյթներ կապել և ասով՝ Կոստանդիա-
նոս ցոյց տուաւ իր անզուգական առատա-
ձեռնութիւնը , մանաւանդ Հռոմի և Պաղես-
տինի , փրկագործութեան խորհուրդներուն

նուիրուած երկրին մէջ : Մինչեւ իր մահը չը
դադրեցաւ յարգանք ու մեծարանք ցոյց տա-
լէ ինչին , որուն միայն կը վերագրէր իր
յաղթութիւններն ու յաղթանակները . յաղ-
թական խաչ մը դնել տուաւ հասարակաց հը-
րապարակին մէջ տեղը . և ուրիշ ոսկեղէն
խաչ մըն ալ՝ իր պալատին ամէնէն հոյակապ
յարկաբաժնին մէջ :

Ամբողջ Պետութեան մէջ պարտադրեց Կի-
րակոսեայ հանգիստը : Պահանջեց որ նոյն օրը
քրիստոնեայ զինուորաց ամէն կերպ ազա-
տութիւն արուի աստուածային պաշտամանց
ներկայ գտնուելու համար : Ոչ-քրիստոնէից
պատուիրեց հրապարակաւ ըսել աղօթք մը ,
զոր ինքը շարադրած էր , որուն մէջ կը
խնդրուէր գերագոյն Աստուծոյ , տիեզերքի
ամենակարող տիրոջմէն , պարգեւել իր շը-
նորհքները՝ Կոստանդիանոսի և անոր պետու-
թեան :

Կոստանդիանոս քաջ գիտնալով թէ կղերը
ու Եկեղեցւոյ հովիւները խղճով և իրենց վի-
ճակին բերումով ստիպուած են խաղաղու-
թեան և հաշտութեան պաշտօնը վարել
մարդկային ընկերութեան մէջ , զանոնք թըշ-
նամի և հակառակորդ չէր նկատեր . այլ յա-
ւէտ անշահախնդիր և հաւատարիմ գործա-
կիցիներ : Անոնց ամէն տեսակ ձեռնտուութիւն
ըրաւ , որպէսզի Վարենան իրենց սուրբ եւ
գերազանց առաքելութեան մէջ հեղինա-
կութիւննին և ազդեցութիւննին պահել :

Եկեղեցական վէճերու մէջ զիմեց Քահա-
նայապետին զատաստանին , ինչպէս Դոնա-
տեանց խնդրին մէջ , միայն զանիկայ ճանչ-
ցաւ գերագոյն և օրինաւոր զատաւոր : Եկե-
ղեցւոյ ծայրագոյն Գլխոյն ունեցած յարումը
ցոյց տուաւ , անոր մեծամեծ պարգեւներ ը-
նելով , և յատկապէս շնորհելով Լատերանի
պալատը . և անպառ առատաձեռնութիւն-
ներ ըրաւ կղերականութեան ապրուստն ու
բարգաւաճումը ապահովելու համար : Հաս-
տատեց նաեւ , 321 ին , օրէնքով մը , թէ ա-
մէն ո՛չ իւաւունք ունի կղերականներու եւ
Եկեղեցիներու կտակ կամ պարգեւ ընելու .
և թէ՛ անժառանգ մեռնող մարտիրոսներու
ինչքերը Եկեղեցւոյ պիտի արուին :

Անկարիլի է համառօտակի ցոյց տալ ինչ որ ըրաւ նա, հանրային սովորոյթները բար-ւոքելու, զանոնք հեթանոսութեան ձգած խոր անդունդէն հանելու համար: Իսպառ ջնջեց սուսերամարտից կոխները, անբարոյական ներկայացումները, տղոց սպանումը և ընկե-ցումը, առեւանգումն ու շնութիւնը: Ուրիշ օրէնքներով բարեկուսեց կիներու և զաւակ-ներու վիճակը: Գերութիւնը՝ եթէ ուղղակի արգիլուէր, նոյն ատենուան ընկերութեան մէջ ընդհանուր խռովութիւն և շփոթութիւն յառաջ պիտի բերէր: Կոստանդիանոս ձեռ-նամուխ եղաւ անուղղակի միջոցներու, գե-րիներու ազատագրումը զիւրացնելով, ազա-տագրեալները եկեղեցւոյ պաշտպանութեան տակ գնելով, եւ հրէից քրիստոնէայ գերի ունենալը արգիլելով: Այս նպատակաւ, յայ-տարարեց որ գերիներու ազատագրումը տօնի օրերը թոյլատրելի օրինական գործերէն է. եւ եթէ եկեղեցիներու մէջ տեղի ունենայ չ'են-թարկուի օրինական ձեւակերպութեանց: Խիստ պատիժներ սահմանեց իրենց գերիները հարստահարող տէրերու, և ի մեծարանս խաչեալ Յիսուսի, խաչելութեան խժոժական տանջանքը խափանեց իսպառ:

Արժան եւ իրաւ է ուրեմն որ բոլոր աշ-խարհ մեծանանդէս չքով տօնախմբէ այս մեծ Կայսեր՝ եկեղեցւոյ պարգեւած բարիքներուն յիշատակը, և շնորհապարտ զգացումներով յարգանք մատուցանէ անոր անուան:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՄԸ Ք. ԹԱԳՈՒՅԻ ՃԵՆՏԵՐԷՃԵԱՆԻ ՎՐԱՅ

Ա. ՅՂՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԷՆ ՄԻՆ

(Շաբ. եւ վերջ)

Ակնարկ մըն ալ ձգենք իր կրօնաւորական կեանքին վրայ: Այս հզօրապէս կրօնաւոր դէմքը հնազանդելու յարատեւ և հաստա-տուն տենչով մը յաջողած էր իր մէջ ջախ-ջախելու կամքը և անոր ամէն պահանջները. մեծաւորութեան պաշտօններէ միշտ խոյս տուած ըլլալով, հնազանդիլ և հպատակիլ ըրած էր իւրն նշանաբանը: Կը հնազանդէր

մեծաւորաց, կը հնազանդէր կրտսերագոյն-ներու, կը հնազանդէր զանգակներուն՝ նո-րնծայի մը փութկոտութեամբ: Այդ վար-պացեալ տարիքին մէջ — ի բաց առեալ ծանր և ցանցառ պարագաներ — օր մը վանց չը-րաւ հոգեւոր հրահանգները: Առաւօտեան ա-ղօթքի զանգակէն 10-15 վայրկեան առաջ մատուռ կը գտնէինք զինքը, ծնրադիր ա-ղօթքի կեցած — լուիկ յանդիմանութիւն և սքանչելի քարոզ զանդաղներու —: Իր տա-րիքը և հիմնադրի հանգամանքը երբէք յօ-գուտ չգործածեց ո՛ր և է արտօնութիւն մը վայելելու: Ամենափոքր յապաղման մը և մարդկային մոքին յատուկ ըմբոստութեան աննշան երեւցող բաներու համար Մեծաւոր Մօր զուրը ձեռք կ'առնուր բացատրութիւն տալու կամ հրաման խնդրելու:

Չափազանց երախտագէտ էր իրեն մա-տուցուած ամենափոքր ծառայութեան մը համար. սակաւապէտ, և յետին աստիճանի մտադիր ուրիշի ձանձրոյթ չպատճառելու: Ինչպէս տեսանք, Աւետարանը իր սփոփանաց և հաճոյից աղբիւրն էր. լաւ սորված էր, «Հեզ ու խոնարհ սրտիւ» ըլլալ: Այն բու-րաստանէն կը քաղէր առաքինութեանց փունջին անմահ ծաղիկներ: Ինքն ալ արդէն տունկ մը քրիստոսական պարտէզին, անոր խօսքերուն ցօղովը կը նորոգուէր կը կազ-դուրուէր և կը հրճուէր: Անոր եկեղեցւոյն փառքերը պատմիլ կու տար, սուրբերուն յաղթանակները լսելուն՝ երկնային նշոյլներ, մաքուր հոգիէն բղխած ժպիտներ կ'ոգեւո-րէին իր գիմագիծը: Տօներու առթիւ եկե-ղեցի գացողներէն կ'ուզէր լսել հոն տրուած քարոյները, կատարուած հանդիսաւորու-թիւնները, ժողովրդեան ջերմեռանդութիւնը: Ձինքը չտրամեցնելու համար զգուշացանք վերջին ցաւալի իրողութիւնները իրեն հաղորդելէ: Քրիստոսի ճշմարիտ հեռեւորը չմարեց երբեք առկայծեալ ճրագը, չըրթունք-ներէն չեղաւ երբեք խօսք մը որ ուզողի կամ անուղղակի կերպով վիրաւորէր կամ նսեմացնէր եղբայրական սէրը կամ օրինաւոր իշխանութեան յարգանքը:

Դեռ չատ առաքինութիւններ կրօնաւոր

րական և ընկերական կրնայինք վեր հանել եթէ համառօտ անցնելու ստիպումը չունենայինք. առաքինութիւններ՝ որ իր կենաց վերջալուսին կրկին փայլ և պայծառութիւն առած էին: Մենք լախտ ունեցանք այդ հանդարտ, միապաղաղ, վեհապանծ վերջալուսին նշոյլները վայելելու, որոնց տեւողութիւնը որչափ երկարածի՞ր նոյնչափ ալ շինիչ եղաւ: Իր Աստուածը, աւելի քան երբեք իր հետն էր, իր մէջը և իր շուրջը. այդ ներկայութեան կենսաւէտ ազդեցութիւնը կը զգայինք մենք երբ իրեն մօտենայինք անկից ճառագայթում մը կը փրթէր մեր վրայ, երբ դժուարին ժամերու երթայինք իրեն, խորհուրդ մը, յորդոր մը, աղօթք մը, օրհնութիւն մը խնդրելու, այդ ներկայութիւնը թափանցելով դար մը կեանք ներկայացնող տարրին մէջէն, ըստ կարօտութեան պարագային կը հոսեցնէր իր լոյսը և զօրութիւնը: Վերջապէս անոր մօտենալով մարդ ինք զինք Աստուծոյ աւելի մօտ կը զգար, վաճառ ինք միշտ Աստուծոյ հետ էր: Օր մը Քոյրերէն մէկը կը հարցնէ թէ ինչ կը խնդրէ Աստուծոմէ, այնչափ երկայն աղօթքներով: Ըսան մը չեմ խնդրեր, կը պատասխանէ, ամէն բան տուած է ինծի, այլ կ'ուզեմ զի՛նքը ամէն վայրկեան փառարանել, և սէրս յայտնել: Զջմարիտ աստուածսիրութիւն, որու բարերար հոսանքը կ'անդրադառնար մերձաւորին վրայ:

Այս տարի Յունուարի վերջերը թեթեւ ենձիւռեկցայէ մը բռնուեցաւ, թէպէտ ինք քանի մը անգամ կրկնեց թէ այս հիւսնադութիւնը զինք գերեզման պիտի սանի, բայց մենք կը յուսայինք և կը բաղձայինք որ այս անգամ ալ ապաքինէր և ժամանակ մը ևս վայելէինք իր ներկայութիւնը: Աստուած կատարեց մեր փափաքը, շատ քիչ ժամանակի համար սակայն: Մայր Թագուհի բոլորովին կազդուրուելու վրայ էր երբ ձախակողման իջուածք մը կ'անդամալուծէ այդ մասը, բըժիշկը յայտարարեց թէ իր արուեստը անկարող էր այս անգամ — երկու տարի առաջ մահացու հիւանդութենէ մը փրկած էր զինքը — ո' և է պիտիանք հայթայթելու: Սակայն կը խօսէր և իր որպիսութիւնը հարցը-

նողներուն «աղէկ եմ» կը պատասխանէր, իր սովորական հանդարտութեամբը: Մարտ Ծին վիճակը ծանրացաւ, զգացինք որ ալ պիտի մեկնի մեզմէ, և քուն մը, որմէ պիտի չարթննար երբեք, փակեց իր արտեւանունքը, երեք օր տեւեց այս քունը. հանդարտ և պարզ կեանքին նման հանդարտ և պարզ հոգեվարքն էր այն. ո' և է կնճառտութիւն մը չունեցաւ, երբեմն թեթեւ նոպաներ կը շառաղունէին իր գէմքը որ հիւանդութեան հետք մը չէր կրեր: Այս միջոցիս ստէպ Արհ. Փոխանորդ Գերապայծառը և ուրիշ վարդապետներ կու գային հոգեվարքի աղօթքներ զուրցելու, վերջին խորհուրդները արդէն մատակարարուած ըլլալով նախապէս: Մարտ Ծին կիրակի օրը կէսօրէն վերջ հասկցանք թէ վերջին վայրկեաններն էին: Քոյրերէն մէկը Մաշտոցին հոգեվարքի աղօթքները կը կարգար բարձրաձայն, մենք ալ շուրջը բոլորած, խորին երկիւղածութեամբ կ'աղօթէինք երբ մէկ երկու խորունկ հառչանքներ արձակելով խաղաղիկ և անդորր վերջին շունչը աւանդեց, Վարդարանի զանգակին հնչման հետ, Արարչին՝ զոր սիրած և պաշտած էր, որուն հաւատացած և ցանկացած էր ամբողջ զար մը:

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՅՈՅՑ

Ապրիլ 27	† Կիր. թի. 12.	or Յիւնաց
28	Բշ. զձ. 11.	»
29	Գշ. զկ. 12.	»
30	Դշ. զձ. 13.	»
Մայիս 1	† Եշ. թի. Համբարձումն	
2	Ուրբ. աձ. 14.	» Պանի
3	Շր. ախ. 15.	»

Ս. ՎԻՆԿԵՏՏՈՍ ՖԻՐՐԵՐԵԱՆ

(Շար. եւ վերջ)

Այս տուրը մեծ սքանչելագործ մը եղած է. իր գործած անթիւ անհամար հրաշքներուն միայն մէկը պիտի պատմենք հոս համոռ օտիւ:

Մայր մը՝ որ մերթ ընդ մերթ ենթակայ կ'ըլար

կատաղութեան, պայսիսի վայրկենի մը մէջ մորթած էր իր դաւակը և յօշոտելով անոր մարմինը, խորոված էր: Հայրը յուսահատ՝ գիւնեց Սուրբին, որ զանի միւթ-թարեց, ապահովելով որ Աստուած ոչսքան ողբեր-գական պատահար մը թալլ տուած էր՝ միայն իրեն փառքը յայտնելու համար: Եւ իրօք ալ, կտոր կտոր եղած մարմինն մասերը բերել տալով՝ զանոնք ըստ պատշաճի քովէ քով շարեց ու տեղաւորեց. և իր աղօթից ազդեցութեամբ ու Ս. Խաչի նշանին ներգործութեամբ յարութիւն ու կեանք առաւ այս մարմինը: Նորանշան հրաշք մը, որուն նմանք գրեթէ չի գտնուիր ամբողջ եկեղեցական պատմութեան մէջ:

Ինչպէս զարմանալ ուրեմն որ իր խօսքը այնքան առատ արդիւնք պտղաբերեց, մինչ զի դարձի բերաւ տանկեութեամբ հաղար Մաւրիտանացի ու Սարակի-նոս, քանեւ հինգ հաղար Հրեայ, քառասուն հա-ղար հերետիկոս ու հերձուածող, և անթիւ ան-համար գիւղացիներ, որոնք տգիտութեան ու չա-րութեան մէջ հեթանոսներէ վար չէին մնար: Բաց աստի իր քարոզութիւններով հարիւր հազարէ աւելի մեղաւորներ դարձի բերաւ: Խոստովանարանի մէջ իր խրատները այնչափ ազդեցիկ էին որ իր ապաշխարող-ներէն մեծնոցներ եղան իր ստաբերուն առջեւ: Իրենց արան մէջ անոր վարժ ուցած զգոյնով ցաւին սաստ-կութենէն:

Սատանան ի զուր կ'աշխատէր իր գերութեան մէջ պահելու այն հոգիները որոս Վինկէնտիոս կը յափշտակէր անկէ: Ահաւոր կերպով հալածեց զինքը, բայց ի զուր: Նոյնպէս բարձրասանը, զրպարտութիւն, հալածանք ի գերեւ ելան և ապագիւն մնացին այս հոգւոյն գերնական կրօնին գէմ:

Վինկէնտիոս մեծ մաս ունեցաւ պետութիւն-ներու և նոյն իսկ Եկեղեցւոյ ճակատագրին մէջ. թագաւորները զինքը խորհրդական կ'առնէին. Անգ-լիոյ վէհապետը Հերիկոս Գ. մասնաւոր նաւ մը զըր-կեց զինքը հրաւիրելու համար, և ընդունեց արտա-քոյ կարգի պատիւներով:

Բիւնմանթէի մէջ Վալտէր հերետիկոսներէն շա-տերը դարձուց, և Կուէլֆ ու Կուէլլին կուսակցու-թիւնները հաշտեցուց, ընդհանուր խաղաղութիւն մը հաստատեց Լոմպարտիոյ մէջ. իսկ Զուէցերիոյ մէջ ջնջեց աւելորդապաշտութիւնն ու մինչեւ իսկ կուս-պաշտութիւնը:

Հոգիներու այս ա խորհակալը կը թռչէր գաւառ-է գաւառ, ուր որ պէտք կար մղորութեան փա-տակներուն վրայ հաստատելու ճշմարտութեան տե-րութիւնը:

Մաւրիտանացւոց թագաւորը փափաքած ըլլա-լով տեսնել զանի ի կրօնատա, Սուրբը գնաց հոն ու շատ հոգիներ շահեցաւ ի Քրիստոս: Սպանիոյ Հրեա-նէրը անձնատուր կ'ըլլային իր պերճախօսութեան ու-ժին և իր հրաշքներուն առջեւ, ու իրենց ժողովա-րանները եկեղեցիի կը վերածէին: Արաւոնայի մէջ մեծ գգնութիւն տիրած էր՝ գահաժառանգի խնդ-

րոյն պատճառաւ. Ս. Վինկէնտիոս մարեց այդ կրակը և պատճառ եղաւ Կատալիոյ Ֆերտինանտին ընտ-րութեան, որուն խոստովանահայրն ու սովորական քարոզիչն եղաւ, թէեւ նշանաւոր քարոզիչը աւելի ճաշակ ունէր գիւղացիները հրահանգելու քան թէ թագաւորներուն առջեւ խօսելու: Հակապապերու խնդրոյն լուծման համար Կոստանցոյցի ժողովին գնաց, բայց չի գիտցուիր թէ արդեօք կրցաւ անոր մասնակ-ցիլ: Պրըթաներ գաւառին գուբաին աղաչանաց զի-ջանելով, կամ լաւ եւս՝ Աստուծոյ կամայ հպատա-կելով՝ իր խոնգարեալ առողջութեան վերջն մնա-ցորդները գործածեց այն գաւառին մէջ աւետարա-նելու: Տեսնելով իր բարեկամները թէ մեռնելու մօտ է, խորհուրդ տուին որ իր ծննդավայրը մեկնի օդա-փոխութեան համար: Թէեւ ուղեց այս խորհուրդին անալ, սակայն հրաշք մը կատեցուց զինքը. երբ կ'ելլէր Վանս քաղաքէն՝ ըսաւ իր ուղեկից կրօնա-ւորներուն. Ես զառնա՛մ, ելլա՛մ, Աստուծոյ կ'ուզէ որ ես հոս մննիմ: Եւ իրօք ալ, իր հոգին յանձնեց Աստուծոյ, ի ներկայութեան դքսուհի Յովհաննայի և բոլոր պալատականներուն, չարքարթի որը 1118 Ա. Վրիլ Ծին, եթանասուն տարեկան:

ՀՈԳԵՆՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

Գրք Ա.—Գլ. Է.—Մճոսի յուսոյ և սոփաբու-րեան վրայ:

(Շար.)

Ինկզիկնիզ ուրիշներէն շաւաղոյն մի՛ կարծե՛ր, մի՛ գուցէ վասարաւոյն հաւառուիս Աստուծոյ առջեւ, որ մարդու ներքինը գիտէ:

Մի՛ հպարտանա՛ր քաւի գործերուդ հաւառ. խնդի մարդոց դասասաններէն տարբեր են Աստուծոյ դասա-սանները, որուն յաճախ անհաճոյ ևն այն քաները որ հաճելի են մարդկան:

Երբ քաւի քան մը ունիս, համոզուե՛ր որ ուրիշներ շաւաղոյն քաներ ունին, որպէս զի պահիս խոնար-հուրիւնը:

Վնաս մը չես կրե՛ր երբ ամեկուն ալ ստորադաս ըլլաս. քայց շատ մեծ վնաս է երբ նոյն իսկ մեկուն մը գերադասես զից:

Խոնարհ մարդը պիտի վաշիկե՛ն ճշակակ խաղաղու-թիւն. իսկ հպարտին սրտն մեջ նախանձ և յաճախակի քաւիւնսն:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆՍ

COLLECT. Հ. Ա. ԷՋ 231 ԹԻԻ 389

Հրահանգ Ս. Ժողովոյ Տար. Հաւատոյ 10 Մայիս 1753(*)

Հաւատաքննութեան Ս. Ժողովը, յաստուածայինս հաղորդակցութեան մասին իրեն եղած հարցումներուն պատասխանելով՝ «Արեւելքի եկեղեցականներուն և միսիոնարներուն տրուած հրահանգներուն առաւելագոյն լուսաբանութեան համար հարկ զատած է Երջանկայիշատակ Բենեդիկտոս ԺԴ-ի Թիմական Սիւնդոդոս անունով գրքին հետեւեալ կտորը օրինակել և զրկել»։— Մենք ալ նոյնին կարեւորագոյն մասերը հոս թարգմանարար կը գնենք։— «Արդարեւ ժամանակիս զմեզակ կացութեան բերմամբ շատ գաւառներու մէջ, ուր հերետիկոսները կամ մեծամասնութիւն կը կազմեն կամ անպատուհաս կը խիզախեն, Կաթողիկէները ցաւալի հարկին մէջ կը գտնուին անոնց հետ սերտ յարաբերութիւններով կապուելու։ Թէպէտեւ հաղորդակցութեան մասին նոր բարեկարգական կանոնաց համեմատ, որ հաստատուած են Մարտիրոս Ե. Բահանայապետէն, թոյլ տրուած է Կաթողիկէից՝ աշխարհային և քաղաքական գործոց մէջ հաղորդակցիլ յականէ յանուննէ չծանուցուած հերետիկոսաց հետ, սակայն սակէ հետեւցնելու չեն Կաթողիկեայք թէ օրէն է իրենց սրբազան և աստուածային իրաց մէջ ալ անոնց հետ յարաբերութիւն ունենալ։ Կան աստուածաբաններ որ հերետիկոսաց հետ յաստուածայինս հաղորդակցութիւնը ներքի կը համարին ինչինչ հաղուադէպ պարագաներու մէջ և խիստ պայմաններու տակ, օրինակի համար, որ բնաւ առիթ չըլլայ գայթակղութեան, կամ կասկած չտրուի կրօնական անտարբերութեան, կամ զաւանական անխտրականութեան և չն. և չն. Սակայն ասոնց կը հակառակին, ուրիշ բաղմաթիւ ստատուածաբաններ, և ամէնք առհասարակ համոզում ունին թէ գործնականի մէջ շատ վտանգաւոր է այս կարծիքը։ Բաց

(*) Տես ԹԻԻ 84 էջ 439.

աստի, նոյն իսկ եթէ այս կարծիքը ընդունելի համարուի, քանի որ վերոյիշեալ ամէն պարագաներն ու պայմանները միասին և մշտամանակ գտնուելու են, որպէս զի Կաթողիկէից հերետիկոսաց հետ հաղորդակցութիւնը զԿրծ ըլլայ ու իցէ յանցանքէ, անոր համար գործնականի մէջ գրեթէ անկարելի է որ հերետիկոսաց և հերձուածողաց հետ յաստուածայինս հաղորդակցութիւն ընող Կաթողիկէները կարենան ազատ ըլլալ մեղքէ։ Ասոր համար Հաւատաքննութեան եւ Հաւատոյ Ծաւալման Ժողովները այդ հաղորդակցութիւնը միշտ ապօրինաւոր համարած են. եւ սահմանած են՝ հարկ եղած ատեն միախառնուելու զրկուելիք հրահանգներ, որոնց մէջ կը յայտարարեն թէ գործնականին մէջ շատ քիչ անգամ կրնայ պատահիլ որ Կաթողիկեայք առանց յանցանքի հաղորդակցին յաստուածայինս հերետիկոսներու հետ։

ԵՒԴՈՒԿԱՅԻՆ

Եւրոկիս, 13 Ապրիլ 1913

Գեղարգելի

ԳԵՈՐԳ ԳԵՐՊ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Խմբագրապետ « Կաթողիկէ Արձագանգ » ի

ԲԵՐԱ

Գերապայծառ Տէր

Պատուական Արձագանգին Եւրոկիայի գրեթէ առաջին աշխարհական քաժանորդը ըլլալու պատիւ ունեցած եւ եւ միշտ կը փափաքի երբեմն երբեմն յոգնած յիկի գոնէ յոյզն կերպով նկատած ըլլալու համար միտերը լուսաւորելու պիտի գործին։ Բայց առաջ գրադրմանս արգելք եղած եւ մինչ հիմա այս փափաքս իրագործումին։

Բայց կը զգամ թէ հարկաւոր է շարժում մը աշխարհականներու կողմէ գործելու համար հոգեւոր իշխանութեան միացած ընդդիմ Պոլսոյ յշտառական ընդդիմութեան եւ ցուցնելու անոնց թէ առաջին ժողովրդեան ողորմիս իսկ ըլլայ ուսեայ ըլլայ անուս միշտ կը թողնէ աննց վաս արտօններուն դիմ եւ կը մնայ հաւատարմ, հնազանդ եւ անձնուէր Ամենապատիւ Թերզեան Կաթողիկոս-Պատրիարքին։

Ներփակեալ կը գտնուի երկու էջէ քաղկացած ա-

ուսչին գրութիւնս եւ երե յարմար դասեմք՝ քարտեհանիս՝
զայն արդիւ իսկ Կարողիկէ-Արմազանցի քիւերեմ միոյն
մէջ:

Ասկի վերջ ալ կ'ուզեմ երեւմն երեւմն յօղուած դրկել:

Մնամ Գեղարգելի Տէրութեանդ
Խոնարհ ծառայ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳՈՒՐՈՒՊԱՆԸՔԵԱՆ

Կ. Պոլսոյ մէջ մոլթ ոյժերու թելադրու-
թեամբ հոգեւոր իշխանութեան զէմ սար-
քուած ամբարիշտ ըմբոստութիւնը դժբախ-
տաբար ուրիշ քանի մը թեմերու մէջ ալ իր
չարագուշակ ազդեցութիւնն ունեցած է, այս
ալ Կ. Պոլսոյ ապստամբներու ժողովին՝ մա-
նաւանդ Եւդոկիոյ մէջ՝ կարգ մը անձերու
մօտ կատարած կրկնակի դիմումներէն վերջ:
Բայց երբէք կարծելու չէ թէ ժողովրդեան
մեծամասնութիւնը կը հետեւի այդպիսիներ-
ուն թելադրութեան: Ընդհակառակը Եւդո-
կիոյ Հայ-Կաթողիկէ ամբողջ ուսեալ ուշիմ
դասակարգը և հասարակ ժողովրդեան մեծ
մասը կը կանգնի պաշտպան Կաթողիկէ սկզբ-
ունքներուն:

«Մէծմուս» կոչուած անկրօն թերթին
թունաւոր լեզուին ցափռատունքներուն և Կ.
Պոլիս քանի մը Հայ-Կաթողիկէ եկեղեցիներու
մէջ Յիսուսի Գրիստոսի Մարմնին և Արիւնին
և Խաչի ճանապարհին պատկերներուն զէմ
կարգ մը խելացիորներու կողմէ գործուած ա-
նարգանքներուն իբր փոխարինութիւն կա-
տարուեցան հոս շերմեռանդութեամբ ամէն
տեսակ բարեպաշտական գործեր. յաճախակի
հաղորդութիւններ, Յիսուսի Սրտին ի պատիւ
մասնաւոր աղօթքներ, Ամենասուրբ Հաղոր-
դութեան առջեւ գիշերային հսկում: Այս
վերջինը կը կատարուի Վեր. Յիսուսեան Հայ-
րերու մատուռին մէջ ամէն ամսու առաջին
ուրբաթի նախօրեակին եղող հինգշաբթի գի-
շեր մինչեւ ուրբաթ առաւօտ:

Մեր ամբողջ թեմին մէջ՝ նախաձեռնու-
թեամբ մեր սիրելի Հովիւին, Արհի. Լեւոն
Արքեպ. Քէչէճեանի, հաստատուեցաւ մաս-
նաւոր շերմեռանդութիւն մը՝ ի պատիւ Ս.
Սրտին և այս ալ իբր հատուցում «Մեծմուս»
թունաւոր հայոյանքներուն և Կ. Պոլիս
քանի մը եկեղեցիներու մէջ կատարուած ա-
նարգանքներուն համար:

Ամէն կիրակի և տօնի օրերը Զայնաւոր
Պատարագ կ'ըսուի հոս ի ներկայութեան
հոծ բազմութեան մը և այս տաշի ալ դատ-
կական տօնախմբութիւնները կատարուեցան
խիստ շքեղ կերպով և երկսեռ բազմութիւն
մը մօտեցաւ Ս. Սեղանին: Եւ ի մխիթա-
րութիւն Հովիւին՝ հաղորդողներուն մէջ կը
տեսնուէին այն անձերէն շատերը որ անցեալ
տարի զատկական պատարագին առթիւ ան-
գիտակցաբար եկեղեցւոյ մէջ շշուկներ հա-
նած էին:

Կաթողիկէ եկեղեցին անյաղթ վէմ մըն է,
որչափ ալ ամբարիշտները անոր զէմ մաքա-
ռին, նա միշտ հաստատ կը կենայ իր աս-
տուածատուր սկզբունքներուն վրայ: Կա-
թողիկէ եկեղեցին քսան դարերէ ի վեր
խիստ բուռն հալածանքներու կ'ենթարկուի,
բայց և այնպէս երբէք չէ շեղած իր աս-
տուածային հիմնադրին սկզբունքներէն:

Մեր Կաթողիկէ Հայերուս մէջ ներկայ ա-
պրտամբութիւնը ուրիշ քան չէ, բայց միայն
հետեւողութիւնը այն հակակրօն շարժումնե-
րուն որ տեղի ունեցած են և դեռ կը շա-
րունակուին Եւրոպայի մէջ: Ասոնց մղում
տուողները թէ՛ հոս և թէ՛ այլուր Ֆրանսիստ-
նական յնկերութիւններն են: Մեր ազգը որ
աշխարհի մէջ լուսաւորեալ ազգի մը համ-
բաւը կը վայելէ՝ պէտք է որ արթննայ եւ
կազմակերպուի՝ օրինակ առնելով Եւրոպայի,
մանաւանդ Ֆրանսիայի Կաթողիկէները, որոնք
ամէն ճիգ կը թափեն իրենց հաւատքին ա-
զատութիւնը ձեռք ձգելու համար: Մենք ալ
ճիգ թափենք և կազմակերպուինք, որպէս զի
մեր հաւատքն ալ այսպիսի բռնաբարութիւն-
ներէ զերծ մնայ: Ասիկա ամէն ճշմարիտ Կա-
թողիկէի համար ամենասարգազան պարտա-
կանութիւն մըն է:

Ե. Խ.— Գոհունակութեամբ կը հրատարակենք
Գուրուպաղդեան էֆ.ի այս կարեւոր տեղեկութիւն-
ներով լի յօդուածը. և այս առթիւ կը յայտարա-
րենք որ միշտ պատրաստ ենք հրատարակելու գա-
ւառներէն եկած այդպիսի շահեկան և համառօտ
յօդուածներ:

Ազատամարտի ոգին, ուղղութիւնն ու զաւանթութիւնները ցոյց տալու համար, պատշաճ համարեցանք արտատպել իր հետեւեալ խմբագրական յօդուածը:

ԵՒ ԱՄԲՈՒՐ ԾԱՓԱՀԱՐԵՑ ԿՐԿԻՆ ՈՒ ԿՐԿԻՆ

«Սպանիոյ թագաւորը, երբ ազատուեցաւ այն գնդակէն՝ որ սպաննիչը ուղղած էր իր կուրծքին, զինուորական ձեռով բարեւեց ամբոյրը ու պոռաց. «Կեցցէ՛ Սպանիան»:

Ու ամբոյրը, կ'աւելցնէ հեռագիրը, հետեւեցաւ թագաւորին՝ մինչեւ պալատ, ծափահարութեամբ ու խանդավառութեամբ. հետեւեցաւ, ու կրկին կրկին ծափահարեց, մինչեւ որ թագաւորը հարկադրուեցաւ երկու անգամ պատշգոյսին վրայ երեւնալ, թագուհիին հետ:

Այն ստրուկ, գեանատոյ ամբոյս:

Կը ծափահարէ թագաւորը, — ինչու, ո՞ր զգացման մղումով, ինչ սուրբ գաղափարի համար:

Նոյն այդ Ալֆոնս ԺԳ-ը չէ՞ մարմնացումը այն չարագործ իշխանութեան՝ որ կ'առէ ժողովուրդը, ինչպէս օձը՝ մարդը, որ ձեռք ձեռքի տուած ապականակիր ու մղուծեան մէջ թաթխուած կղերականութեան՝ խեղած է ժողովրդական միտքը, ժողովրդական իրաւունքն ու ազատութիւնը:

Նոյն այդ թագաւորը չէ՞ տէրն ու կնիքը այն իշխանութեան՝ որ Ֆէրըէնները գնդակի կը բռնէ. աշխատելով որ իր երկրին ժողովուրդը ընդմիշտ գաղափարի չբաւարութեան ու անթափանցիկութեան, տգիտութեան ու միջնադարեան խաւարին մէջ:

Եւ ամբոյրը, Սպանիական ամբոյր՝ կ'երթայ ծափահարելու արքայական պալատին առջեւ. շնորհաւորելու որ մահացու գնդակէն ազատ մնացած է իր ոխերիմ թշնամին, — այն անձը, որուն և իր միջեւ ոչ մէկ հաշտութիւն կարելի է:

Ու թերեւս — և ինչո՞ւ տարակուսիլ — այդ ամբոյրը որ կը ծափահարէր, կազմուած էր մեծ մասով մուրացկաններէ, անօթիներէ, կենդանի զոհէ՛րը կենդանի թագաւորին, ու նաեւ անշուշտ՝ Կաթոլիկ Կըղերէն, մեծ ու պզտիկ, Եպիսկոպոս ու քահանայ, «Վանական» ու «Աշխարհական», և այն փերեղակներէն, որոնք ձեռքի վրայ կամ խանութի մէջ կէս ֆրանքով ու մէկ ֆրանքով մեղքի բողոքեան «Կոնգրակներ կը ծախեն» գողերուն, մարդասպաններուն ու ամէն կարգի չարագործներուն:

«Կեցցէ՛ Սպանիան» պոռացեր է Ալֆոնս ԺԳ. — որ Սպանիան արդեօք, խորհող, ազատուէր ու ստրկութիւնն ատմող Սպանիան, թէ՛ ժողովրդակեր, խաւարապաշտ ու կղերական Սպանիան, որ բարոյական փանտախան է իր երկրին յառաջիմութեան ու բարգաւաճման:

Թշուա՛ւ Սպանիա, ո՛րքան նման է այսօր իսկ, այս գիտութեան ու աւակալար սկզբունքներու դաւուն մէջ անդամ, հին Հռովմին, Ներոնի Հռովմին՝ երբ ամբոյրը հաց ու խաղ կ'ուզէր միայն. և երբ փորը կշտանար իր արեան մէջ թաթխուած կոտոր մը հացով ու աչքը գոհանար կրկեսի ահաւոր յօշոտմաներէն՝ կը ծափահարէր կայսրը ու կը պանծացնէր անոր առնունք:

Այդպէս կը փռուաւ որէ այսօր ահա Սպանիացի ամբոյրն ու իր հարստահարիչ իշխանութիւնը, ու անոր ներկայացուցիչ գահակալը՝ Եւ վաղը, թագաւորը պիտի վարձատրէ այդ ծափերը, պիտի վարձատրէ այդ խանդավառ ցոյցերը՝ Նոր ուժով ու կատաղորէն պիտի հնձուին մտածող գրեւորները և ինչան քահին ստերուն առջեւ. պիտի լեցուին բանտերը իրաւապահանջ ու արկածախնդիր կուրծքերով. պիտի հալածուին ազատութեան ու լոյսի կողմնակիցները... և մեռելադաշտը պիտի մնայ դիակապուտներուն՝ իշխանութեան մարդոց, ու գիշակեր ագռաւներուն՝ Կաթոլիկ Կղերին... Ահա թէ ո՛ր Սպանիային համար է, որ «Կեցցէ» կը պոռայ թագաւորը. ո՞ր Սպանիան է, որուն յաւերժութեանը կը բաղձայ Ալֆոնս ԺԳ.:

Ինչ այլանդակ անհեթեթութիւն. տրամիլ, զայրանալ, կատաղիլ ժողովուրդէն սիրուած թագաւորի մը մահափորձէ ազատուելուն համար... Այդպիսի դժոխային զգացում մը կը վայլէ՝ միթէ անոր որ մարդ անունը կը կրէ. ո՛չ երբեք: Այդպիսի զգացում մը՝ կը վայլէ միայն աստուածամարտ և մարդատեաց անիշխանականներուն, որ սպաննեցին 1894ին Գառնո նախագահը, 1896ին՝ Պարսից Շահը, 1898ին՝ Աւստրիոյ Եղիսաբեթ թագուհին, 1900ին՝ Իտալիոյ Ումպերթո թագաւորը, 1901ին՝ Ամերիկայի Մաքքինլէյ նախագահը, 1903ին՝ Սերպիոյ Աղեքսանդր թագաւորը և Տրակա թագուհին, 1908ին՝ Փորթուգալի Գառլո թագաւորը և գահաժառանգ իշխանը, և ղեռ վերջէր՝ Մեքսիկայի Մառէրօ նախագահը և Յունաստանի Եորկիոս թագաւորը: Ահա Սպանիոյ թագաւորին այս գազաններուն ճիրանէն ազատուելուն համար կը տիրի Ազատամարտ, կը զայրանայ Ազատամարտ զիւաշունչ մոլեգնութեամբ: Ժամանակ թերթը լուրջ խմբագրականով մը ջրեց ու ջախջախեց Ազատամարտի յաւակնոտ ու անկրօն Կոռնակցականութիւնը, Դաշնակցականութիւնը:

Արթնցէ՛ք, եղբայրնե՛ր, աչքերնիդ բացէ՛ք, տեսէ՛ք ի՞նչ մտայնութեան, ի՞նչ զգացու- մի տէր է այն թերթը, որ կը յաւակնի ժողովրդեան առաջնորդելու դէպ ի զարգա- ցո՞ւմ: Հարկ չկայ մեկնութեան: Ասկէ յայտնի է թէ որքան զուրկ են կարեւորու- թենէ: Ազատամարտ թերթին մեր Կաթողիկէ դատին դէմ ալ արձակած հայեցանքները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ռ Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Սրբազան Քաջանայապետը մեծ ցաւով լսելով Սպանիոյ Ալֆոնսօ Թագաւորին դէմ գործուած մա- հափորձը՝ յանձնարարեց Կարդինալ Մէրի տէլ Վալին որ իր կողմանէ հեռագրով խնդակցութիւն յայտնէ Ն. Վեհափառութեան:

Հռոմայ Ս. Յովհաննու Լատերանու Մայր- Եկեղեցւոյն մէջ Եկեղեցւոյ ազատութեան Կոստան- գինեան ժԶ. դարադարձին յիշատակին համար փառաւոր հանգիստութիւններ կը կատարուին. և Կա- թողիկէ տիեզերքի ամէն կողմերէն խուռն կը գիմեն ուխտաւորներ Աստուծոյ շնորհակալ ըլլալու և Քրի- փոստոսի Փոխանորդին իրենց որդիական հպատակու- թիւնը յայտնելու: Լատերանու Եկեղեցին, որուն կից է Կալստերական պալատը զոր Կոստանդիանոս նուիրեց Հռոմի Ս. Քաջանայապետներուն, ամբողջ աշխարհի առաջին Մայր Եկեղեցին է, — Basilica Urbis et Orbis. այս պատճառաւ է որ գլխաւոր հանգէսները հոն կը կատարուին:

Բովանդակ հաւատարեալ աշխարհը ներկայացը- նելու համար խմատութեամբ որոշուած է, ինչպէս ստէպ սովորութիւն է Հռոմի մէջ, այլալեզու և այլ- լակերպ ծէսերով փոխն ի փոխ արարողութիւններ կա- տարել, որոնց մէջ յաւէտ ակնախօսիկ կը փայլէ Կա- թողիկէ Եկեղեցւոյ ընդհանրականութիւնը:

Ամսոյս 40ին Լատերանու մէջ մեծ շքեղու- թեամբ կատարուեցաւ հայկական անարատ ծէսով հանգիստաւոր Զայնաւոր Պատարագ. երգեցին Լեւոն- եան Ք. Հայ Դպրոցին սաները. և կերթ ու ներդաշ- նակ եղանակներով Հայ Ազգին պատիւը բարձրացու- ցին Եւրոպայէն և Ամերիկայէն եկած ուխտաւորներու անթիւ անհումար բազմութեան առջեւ: Պատարա- գեց Արհի. Գոյունեան Պ. Արք.: Լատերանեան Կա- նոնիկոսաց Ժողովը մեծապէս պատուեց ծիսակատար- ները, և շնորհակալութիւն յայտնեց: Բայց ամենէն աւելի ուշադրութեան արժանի է սա կէտը որ՝ Ս. Քաջանայապետը, իր անհանգստութեան միջոցին իսկ խորհելով Հայաց վրայ, մանաւորապէս պատուել ու

զեց զանոնք. փոխանակ արժաթեայ յիշատակ-միտա- լին գոր Կանոնիկոսաց Ժողովը պիտի տար ըստ սովո- րութեան, իւր քարտուղարին միջոցաւ ոսկի միտալ զրկեց Արհի. Գոյունեան Արք.ի՝ յարակից վկայա- կանովը, ի յիշատակ կատարուած արարողութեան, առթիւ Կոստանդինեան նշանաւոր Դարադարձին:

Հար Վօկան, Յիսուսեան հռչակաւոր քարո- ղելը որ հիմայ ճաբոն կը գտնուի, Թորքոյի Մերա- կուտին Քիււպին մէջ դատախօսութիւն մը բրաւ Մե- օրեմուս խոփութեանց վրայ, Կայսերական տան Լի- խաններուն, բազմաթիւ պետական, բարձրաստի- ճան պաշտօնեաներու, Մերակուտականներու և Ե- րեսփոխաններու առջեւ:

Գոյունիոյ Արքեպիսկոպոսութեան աթոռը բարձրացաւ Հարթման Գերապայծառը՝ ամենաշքեղ հանգէտով. բոլոր քաղաքը տօնի մէջ էր. տեսակ տե- սակ դրօշներ կը ծածանէին, խորհրդանիշ Կաթողիկէ ներդաշնակ միութեան: Զօրաց զինամարտ շարքեր, զինուորական, քաղաքական, խորհրդարանական Իշ- խաններ, Առաջին Հաղորդութիւն առնող մանկանց սպիտակագէղ խումբեր, կրօնական, աշխարհական քն- կերութիւններու թափօքներ՝ ակնաթով հմայք մը կու տային հանգէտին՝ իրենց համագլխատներուն զոյ- ներուն և ուրախութեան աղաղակներուն հիմնալի զուգարթառնումովը: Նորընտիր Արքեպս. ներշնչեալ շեշտերով բանախօսութիւն մը բրաւ կղերին ու ժո- ղովորդին, և օրհնեց զամէնքը:

ՀԱՅ ԿԱԾՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Ամսոյս Յին վախճանեցաւ Անկիւրիոյ մէջ Գեղյ. Յովհ. Մ. Վ. Օհանեան, 83 տարեկան, արգիւնայից վաստակաւոր Ս. Եկեղեցւոյ Բարքով անարատ էր և հեզահամբոյր. իմաստուն վարչագէտ մը եղաւ իր այլ և այլ կարեւոր պաշտօններուն մէջ: Բաւական տա- րիներ Պրուսա տաւքելութիւն բրաւ, և բարեյիշա- տակ Թիւրքիեան Եպսկ.ի վստահութեան արժանանա- լով, Փոխանորդի պաշտօնը կատարեց: Տեղապահի կամ Փոխանորդի պաշտօնը կատարեց նաեւ Անկիւրիա՝ եր- կար տարիներ անընդհատ, գոհ ձգելով իր Պետերն ու ստորակարգեալները միանգամայն: Ծնած էր 1830ին և ձեռնադրուած 1857ին. իր քահանայութեան Յիս- նամեայ-Յօրեղեանը կատարեց 1907ին, որ առթիւ Թագադիր Արքայի պատուոյն արժանացաւ:

Հանգիցէ ի խաղաղութեան:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Սուրիոյ Բաբելոնոգմանց Ընկերակցութիւն անու- նով Պէյրութի մէջ իրոյժմ և Բրիտանեայ անդամ- ներէ կազմուած Մարմինը՝ լուծեալ հռչակուեցաւ Նախարարաց Խորհուրդին կողմէ, ինքնօրէնութեան ձգտումներ տածելուն համար: Բայց Սուրեանցիները գոհացնելու համար, Շէվքէթ փաշայի նախագահու- թեան տակ գտնուող Դահլիճը որոշեց ընդունիլ առ

նոնց ամէնէն կարեւոր ինդրուածքներէն մին. այսինքն ոչ ոք չէր տեսնուիր արարածիս Վիշապէթներու համար դրուելիք մեծ ու փոքր ամէն կարգի պաշտօնեայք, Վալիններէն սկսեալ, կա՛մ Արար պիտի ըլլան կամ արարածիս. և արարեալները պաշտօնական թուրք լեզուին համահասարակ պիտի ճանչցուի հոն. Ուստի Պէյրուքի, Հայեպի, Դամասկոսի, Մուսուլի, Պաղտատի, Պասրայի, Հիճազի և Եմէնի, ինչպէս նաեւ Երուսաղէմի մէջ կառավարութիւնը երկկեզուեան ըստ փոխ պիտի ունենայ:

✧ Վերջերս Երզնկա՝ Հայու մը տան մէջ պոմպա մը պայթելով, տունը օդը կ'ելլէ, շրջակայ տունները կը փնստուին, երեք հոգի աւերակոյտին տակ թաղուին, կին մը ազգրէն կը վերաւորաւի: Նոյն ընտանեաց մերձաւորներուն տունները խուզարկութիւններ եղեր են և գանուեր են ռումբեր, ուժանակներ և ուրիշ մարտանօթներ:

✧ Դաշնակիցներու պատասխանը Տէրութեանց վերջին ծանուցագրին Ապրիլ 24ին յանձնուեցաւ Մեծ Տէրութեանց Դեսպաններուն:

✧ Ապրիլ 23 թիւով Զէթինէն կը հեռագրուի թէ Դարասաղի յաղթական զօրք՝ մսաւ Շֆոսաւ:

✧ Վերջերս Պուլկար և Օսմ. բանակներու միջեւ որոշուած թշնամութեանց ընդհատման (զինագող) պայմանաժամը, որ պիտի լմնար Ապրիլ 23ին, երկարաձգուեցաւ մինչեւ Մայիս 4:

✧ Կը հաւաստուի թէ՝ Թուրք, Սերպ և Հելլէն զօրավարներուն միջեւ ալ բերանացի համաձայնութիւն գոյացեր է թշնամութեանց դադարման համար:

✧ Մի քանի գաւառներու վիճակը մտահոգութիւն կը պատճառէ:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Աթէնքէն կը տեղեկագրուի թէ բացուեցաւ Երկիրու Թագաւորին քաղաքական կտակը: Թագաւորը

ւորը կարգադրութիւններ ընելէ ետք իր ինչքերուն մասին, խօսքը կ'ուղղէ զաւակներուն, և կը պաղտօտի սնունդ որ միշտ միացած քնանալ Եւսոյ խօսքը կ'ուղղէ սնդարանիկ զաւակին՝ Գոնթանթինի և կ'ըսէ սնոր. «Սիրէ՛ քու սիրեցեալ հայրենիքդ: Ծառայէ՛ սնոր, ինչպէս նաեւ քու սիրելի ժողովուրդիդ: Վստահութիւն ունեցի՛ր սնոր վրայ: Թո՛ղ եղբայրներդ հետեւին նոյն օրինակին»: Թագաւորը կը յորդորէ գահաժառանգը՝ ըլլալ քաջարի, աղ և համբերող. որովհետեւ երբ մարդ կ'իշխէ հարաւային ժողովուրդի մը վրայ, ուրուն զայրոյթը կրնայ շուտով բորբոքիլ, և կրնայ աշխարհի արարքներ ընել, զորս կը մոռնայ յաջորդօրէ, նախամեծար է անձնապէս տառապանք կրել, քան տեսնել երկրին ու ժողովուրդին տառապանքը: Պէտք է որ միշտ ժողովուրդին ու երկրին շահը գերազանց ըլլայ ուրիշ ամէն շահերէ: Թագաւորը խորհորդք կու տայ նաեւ Գոնթանթինի՝ սիրել ու պաշտպանել իր սուրբ մայրը, և զաւակներուն տալ առողջ ու յունական կրթութիւն, որովհետեւ աւոնք ամէն բանէ առաջ պէտք է որ մեծնան իրր Հելլէն: Ի վերջոյ Երկիրու Թագաւորը ներողութիւն կը ինքրէ անոնցմէ, որոնց կրնայ զրկանք մը ըրած ըլլալ: Կը յայտարարէ թէ մինչեւ իր կեանքին վերջին շունչը կը սիրէ իր սիրելի կիներ՝ Օլկան, և կը հրաւիրէ գամէնքը Աստուծոյ աղօթել որ պահպանէ սիրեցեալ փոքրիկ Յունաստանը:

✧ Ձինու կառավարութիւնը հրամայեց կուսակալներուն որ իմացնեն Քրիստոնեայ հասարակութեանց թէ Ապրիլ 27ի օրը, ընդհանուր աղօթքի օր մը պիտի ըլլայ, ու Քրիստոնեայ Եկեղեցիներուն մէջ աղօթքներ պիտի ըլլան յօգուտ Ձինաստանի Ազգային Ժողովին, ընտրուելիք նախագահին, և Ձինաստանի Հանրապետութեան. և Ձինու կառավարութեան պաշտօնեայք ներկայ պիտի ըլլան Քրիստոնեայ Եկեղեցիներուն այս արարողութեան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	257
Թուրք հովուական	260
ԺԶ. հարիւրամեակ Քրիստոնէութեան յաղթանակին	263
Կենսագրական ակնարկ մը Բ. Թագուհի Ճէմսէրէնեանի վրայ	265
Եօթնեակ Քրիստոնէի	266
Հաղորդակցութիւն յասուածայինս	268
Եւրոկիայէն	268
Եւ ամբոխը ծափահարեց կրկին ու կրկին	270
Տեղեկագրական	274

ԱՐՏՕՆԱՏԷՐ


ՅՈՒՆ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՆՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ. Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Գ. Արձագանգ Շաքարաբերքի, Քերտ, Պայրամ փողոց քիւ 5, Կ. Պոլիս



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դնկ.:— Աւստրալիան՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վարմուռնի կանխիկ են:

ՀԱՅԵ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նոյնութեամբ նրաստակել իրեն յրկուած *a* եւ է յօդուած: 3.—Կեղծանունով յրկուած յօդուածներու հետքնակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած թղթի վրայ թուղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ եղանակով դանեկանի նամակադրում ի միասին դրել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի ճոխ եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրատարակութիւններ, բարդեր, բարդ-տետրեր, մանագրներ, եւն., եւն.: Գիրքեր անմրցելի կերպով ածան են: Գեղեցկագիտական նաշակի եւ տպագրական մաքրութեան կողմանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:

ԿԸ ԾԱԽՈՒԹԻ «Տարեկան Սկզբունք Բիւսոնեական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր քղթական 2 դնկն.:
